ԱԲՐԱՀԱՄ ԿԻՍԻԲԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Մանկավարժ, հասարակական գործիչ, հուշագիր Աբրահամ Իսայի Կիսիբեկյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Վարանդա գավառի Սխտորաշեն գյուղում 1892 թ. հունվարի 2-ին: Կիսիբեկյան գերդաստանը բազմանդամ էր, ապրում էր բարեկեցիկ կյանքով՝ ղեկավարվելով դարերով սրբագործված նահապետական օրենքներով: Քահանա էր նրա պապը և ապա ժառանգաբար՝ ավագ հորեղբայրը: Կիսիբեկյան գերդաստանի մասին շրջապատում ասվում էր «Վարանդու քլիղ Գիսիբեկ»: Եվ հիրավի, Սխտորաշենի շրջակայքում տոհմի ազգանվեր բարեգործությունների քարեղեն վկայությունները պահպանվում էին մինչև վերջերս:

Ա. Կիսիբեկյանը սկզբնական կրթությունը ստացել է քահանա հորեղբոր մոտ: 1903 թ. ընդունվել և 1913 թ. ավարտել է Շուշվա թեմական դպրոցը: Ստանալով ժողովրդական ուսուցչի կոչում՝ աշխատանքի է անցել Վարանդայի Գյունե Ճարտար գյուղի ծխական դպրոցում: Ճարտարում մնացել է մինչև 1916 թ.: Աշխարհ տեսնելու ցանկությունը նրան հասցրել է Կրասնովոդսկ քաղաք, որտեղ ծխական դպրոցում աշխատել է մեկ տարի և 1917 թ. վերադարձել Շուշի: Շուշիում իբրև ավագ ուսուցիչ դասավանդել է Մեղրեցոց թաղի ծխական դպրոցում: 1921–1923 թթ. ուսուցչություն է արել հայրենի գյուղում, ապա տեղափոխվել Ստեփանակերտ, ուր դասավանդել է գյուղատնտեսական տեխնիկումում, ուրիշ ուսումնական հաստատություններում: 1927 թ. որդու հիվանդության պատճառով մեկնել է Բաքու, ուր և մնացել է մինչև 1949 թ. աքսորը, բացառությամբ չորս տարվա ընդմիջման, երբ Ադրբեջանի հայկական գյուղերում ուսուցչություն է արել: Բաքվում նա շարունակել է մանկավարժական գործունեությունը տեղի հայկական դպրոցներում: 1939–1942 թթ. դասավանդել է Ադրբեջանական ԽՍՀ Միրզիկի (Խանլարի շրջան) և Ղարադաղլուի (Կասում-Իսմայիլովի շրջան) հայկական միջնակարգ դպրոցներում: 1945 թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: Ուսուցչություն է արել նաև աքսորավայրում՝ Ալթայի երկրամասում: 1956 թ. օգոստոսին աքսորավայրից վերադարձել է և հաստատվել Երևանում, անցել թոշակի: Ա. Կիսիբեկյանը վախճանվել է 1972 թ. նրա աճյունը, իր կտակի համաձայն, տեղափոխվել և հողին է հանձնվել հայրենի գյուղում:

1924 թ. ամռանը ժողովրդագիտական նյութեր հավաքելու առաքելությամբ Լեռնային Ղարաբաղ այցելած անվանի գիտնական Ստեփան Լիսիցյանը Ստեփանակերտում հանդիպում է տեղի գյուղատնտեսական տեխնիկումի ուսուցիչ Աբրահամ Կիսիբեկյանին: Հավանաբար, ծանոթանալով նրա կյանքին ու գործունեությանը, առաջարկում - հորդորում է հուշեր գրել 1918–1920 թթ. Ղարաբաղում տեղի ունեցած անցքերի մասին: «...Որովհետև դա մեր ժողովրդի պատմությունն է ու մեզնից յուրաքանչյուրը պետք է շահագրգռված լինի փրկելու այն կորստից: Մենք

հասարակ մահկանացուներ ենք, այսօր կենդանի, իսկ վաղը կարող ենք և չլինել և մեզ հետ գերեզման տանել մեր ժողովրդի գանձերը՝ նրա հրաշալի ու փառահեղ պայքարի թանկարժեք պատմությունը»[1],– ասում է Լիսիցյանը: Եվ Կիսիբեկյանը, անսալով Ս. Լիսիցյանի խորհրդին ու իր ներքին ձայնին, խորապես գիտակցելով գործի կարևորությունը հայ ժողովրդի, մասնավորապես արցախահայոց պատմության համար, գրի է առնում իր հուշերը, սկսելով մանկության տարիներից՝ XIX դարի վերջից ու հասցնում դրանք մինչև XX դ. 60-ական թվականները: Ինը գրքից բաղկացած նրա «Հուշերի» մեքենագիր օրինակը պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ)՝ ֆ. 314, ց. 1:

Ա. Կիսիբեկյանի «Հուշերի» առանձին հատվածներ հրապարակել ենք մամուլում տարբեր տարիների [«Ուրբաթ» (շաբաթաթերթ), 1991, № 35–37, 40, 41, 1993, № 11, 12, 14, 17 և այլն]: Ստորև ներկայացնում ենք Շուշիի 1920 թ. մարտյան կոտորածներին վերաբերող հատվածները:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ասկյարանն ընկավ: Թուրքերը մտան քաղաք. մինչև այդ հայերին ձեռք չէին տվել: Քաղաքում մնացած հայերի մեծ մասը գտնվում էր բանտում, որտեղ և կոտորեցին:

1920 թ. հուլիսի 14-ն էր, մի խումբ մարդկանց, որոնց հետ և ինձ, բերին բանտը: Այդ ժամանակ բանտում ոչ մի բանտարկյալ չկար: Բանտապետը մեզ առաջարկեց բարձրանալ երկրորդ հարկը, մաքրել մի սենյակ և այնտեղ տեղավորվել: Մենք, բարձրանալով երկրորդ հարկը, մտանք մի սենյակ և սկսեցինք մաքրել: Երբ բարձրացրինք փայտյա թախտերը՝ հատակը մաքրելու համար, մենք սարսափեցինք: Թախտի հակառակ երեսը պատած էր բավական հաստությամբ չորացած արյունով: Մենք թողինք այդ սենյակը և անցանք ուրիշ սենյակ և դարձյալ նույն պատկերը:

Բերում եմ այստեղ մի ուրիշ ականատեսի մանրամասն պատմածը:

1933 թ. ամառն էր. ես գտնվում էի Կիսլովոդսկում: Այնտեղ՝ մրգավաճառի մի խանութում, պատահեցի մի գործակատարի՝ սպիտակ խալաթը հագին, մի սպիտակ թաշկինակով ձախ կուռը միացրած վզի հետ: Դա 55–60 տարեկան, Շուշվա իրականության մեջ հարգված, քաղաքային խորհրդի անդամ, քաղաքի կենտրոնական բանկի ավագ հաշվապահ, մենշևիկյան կուսակցության անդամ Կոստանդին Ջավադիչ Հարությունյանն էր, որին կոչում էին «Բանկին Կոստյա» և որին ես լավ էի ճանաչում ու կարծում էի, որ նա սպանվել է:

Մի քիչ զրուցելուց հետո նա ինձ խնդրեց այս գիշեր իրեն մոտ մնալ: Ես սիրով ընդունեցի նրա առաջարկը: Երեկոյան նա շատ երկար կանգ առավ Շուշվա կո-

[1] *ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 30, թթ. 2 - 3:*

տորածի վրա, որին ականատես էր եղել և մի հրաշքով կենդանի մնացել՝ ջարդված թևով (այժմ էլ չորացած թևը կապած պարանոցին):

Նա իր պատմությունն այսպես սկսեց.

– Վաղ առավոտյան, երբ լսվեցին կրակոցները, բոլորը տներից դուրս եկան և լցվեցին փողոցները՝ չիմանալով, թե ի՞նչ է կատարվում և սկսեցին փախչել, ես էլ նրանց հետ: Գնում էինք դեպի զբոսավայրը: Ճանապարհին շատերը մտան Ռուբեն Նիկոլանիչ Շահնազարյանի[2] բնակարանը. ես էլ հետևեցի նրանց:

Այստեղ մոտ 1–2 ժամ մնալուց հետո բակը մտան մի խումբ ասկյարներ. ծեծելով ու հայհոյելով բոլորին՝ քշեցին, տարան կառավարական շենքի հրապարակը. մեզ հետ էր նաև Ռ. Ն. Շահնազարյանը, որին իսկույն տարան Սուլթանովի[3] մոտ: Այդտեղ ժողովեցին քաղաքի զանազան մասերից հազարավոր կանանց, երեխաների ու տղամարդկանց: Ղեկավարներն էին բժիշկ Մեհմանդարովը, Խոսրով բեկ Ֆոլատովը և ուրիշները:

Ծերունիներին, կանանց և երեխաներին քշեցին բանտը, նրանց հետ՝ նաև ինձ, իսկ մնացածներին տարան դեպի քաղաքի զանազան կողմերը: Բանտը քշվածներն այնքան շատ էին, որ լցված էին մինչև անգամ բակն ու միջանցքները:

Այդտեղ համարյա չէին կերակրում, նրանց ծեծում էին ու անվերջ տեղի էին ունենում բարբարոսություններ և հափշտակում գեղեցիկ կանանց ու աղջիկներին:

Չնայած այդ ամենին դեռ նրանց չէին կոտորում՝ վախենալով՝ միգուցե հայերը քաղաքը վերցնեն:

Երբ Ասկյարանն ընկավ, և դրսից քաղաք մտան, մենք մահվան սարսափի տակ սպասում էինք մեր ողբերգական վախճանին… հասավ այդ սոսկալի ժամը: Բազմաթիվ մարդիկ լցվեցին բանտը և սկսեցին սրերով հարվածել՝ չխնայելով ոչ ոքի, իսկ այդ ոճրագործներին ոչ ոք չսանձեց…

– Իսկ դու ինչպե՞ս ազատվեցիր,– հարց տվի ես:

– Տեսնու՞մ ես, ես էլ կիսամարդ դառած (ցույց տվեց չորացած ձեռքը ու վզի վրա գտնվող խոր սպին)՝ մի կերպ ազատվեցի, որ ավելի շատ տանջվեմ:

Նա շարունակեց.

– Ես չգիտեմ՝ ինչ պատահեց ինձ հետ, միայն երբ ուշքի եկա, ես ինձ գտա հիվանդանոցում՝ ինձ հետ մի քանի դժբախտներ ևս:

– Ի՞նչ տեղեկություն ունես Վահան եպիսկոպոսի[4], Ծատուրյանի[5], բժիշկ Յարամիշյանի և Գաբրել վարժապետի մասին,– հարցրեցի ես:

Նա պատասխանեց.

---

[2] *Ժամանակի հասարակական-քաղաքական գործիչ, այդ ժամանակահատվածում եղել է Շուշիի քաղաքագլուխ:*

[3] *Խոսրով բեկ Սուլթանով – Ղարաբաղի ժամանակավոր գեներալ նահանգապետ՝ նշանակված Ադրբեջանի կառավարության կողմից 1919 թ. սկզբներին:*

[4] *Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան (1848–1920) – Ղարաբաղի թեմի առաջնորդ 1916-ից:*

[5] *Ալեքսանդր Ծատուրյան (?–1920) – հասարակական-քաղաքական գործիչ:*

– Բոլորին էլ սպանեցին: Բժիշկ Յարամիշյանը մեծ հույս ուներ, որ բժիշկ Մեհմանդարովը կարող է իրենց օգնել, բայց նա բոլորից սարսափելի գտնվեց…

ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թթ. 227–229: Ինքնագիր: Մեքենագիր:

ԵՐԿՈՒ ԿՈՒԺ

Ես ականատես եղա շատ զարմանալի, բայց և միևնույն ժամանակ շատ ցավալի մի երևույթի, որը տակն ու վրա արավ իմ հոգեկան աշխարհը:

Ահա թե ինչ. այն ճանապարհը, որով մենք անցնում էինք, նրանից 4–5 քայլ ներքևով անցնում էր ճանապարհին զուգահեռ մի արահետ, որտեղով անցնում էր թալանից վերադարձող հայ կանանց քարավանը: Ես նկատեցի 40–45 տարեկան, առողջ, բարձրահասակ, հաղթանդամ կազմվածքով մի կնոջ, որը պղնձե երկու մեծ կուժեր թոկով կապել էր ունկերից և գցել ուսին. մի կուժն ընկած էր մեջքի վրա, իսկ մյուսը կախված էր առջևի կողմից: Ես ձիուս սանձը քաշեցի և դուրս եկա ճանապարհից ու քշեցի ուղիղ դեպի այդ կինը: Կինը զարմացած ու այլայլված դեմքով, հայացքը դարձնելով ինձ վրա՝ կանգ առավ:

– Մայրի՛կ, մեկը բավական չէ՞ր, որ երկուսն ես վերցրել: Բա ամոթ չի՞… բա դու հայ կին ես և այն էլ էդ հասակում, այդ ինչո՞վ ես զբաղվում այս կեսգիշերին. ի՞նչ-գործ ունես թալանի հետ, մի՞թե դա քեզ պատիվ է բերում… այսքան տեղը ոտքով գնացել ես և մի կուժով էլ չես բավականացել,– ասեցի ես: Կինը սկզբում խիստ շփոթվեց, կարմրեց՝ չիմանալով՝ ինչ պատասխան տա… նա մի քիչ տատանվեց, կմկմաց և հետո կարծես ուշքի գալով, խրոխտ ու համարձակ ձայնով ասաց.

– Ա՛բալա, խի՞ ես ինձ մեղադրում… սպասի՛ր, իմ խոսքն էլ լսիր, հետո մեղադրիր: Այս երկու կուժերից մեկն իմ սեփական կուժն է. երբ հայրս ինձ ամուսնացրեց, այս կուժն էլ տվեց իբրև բաժինք իմ հայրական տնից: Սա իմ ծնողներից միակ հիշատակն էր, որը մնացել էր: Նրանից հետո տասնյակ տարիներ եղել է իմ աչքի լույսը: Սրանից մեկ տարի առաջ էդ անաստվածները եկան մեր գյուղը՝ Սպիտակ շենը, կրակ տվին, իմ տղային էլ սպանեցին և այս էլ (ձեռքը դրավ առջևից կախված կուժին) վերցրին ու տարան: Այժմ աստված նրանց պատժեց, և մենք այրեցինք նրանց գյուղը: Ես, որ ճանաչում էի իմ հարևան թուրքին՝ տունս կրակ տվողին, որդուս սպանողին ու կուժս տանողին, գնացի դաղված սիրտս հովացնելու:

… Իմ կուժը վեր առա ու նրա կուժն էլ հետը: Թո՛ղ հասկանա այժմ, թե ինչ վատ բան է հարևանի տունը քանդելն ու նրա որդուն սպանելը… ինձ մեղադրու՞մ ես, իսկ ի՞նչ վատ բան եմ արել… բա ինչու՞ նա իմ տունը թալանեց և իմ որդուն էլ սպանեց, ինձ մի մեղադրիր, ես իմ վրեժը հանեցի, իմ դաղված սիրտը հովացրի:

Կնոջ դեմքը սարսափելի էր. ես չկարողացա այլևս նայել նրա դեմքին, նրա աչքերին: Ընկերներս բավական հեռացել էին և, ճիշտն ասած, ես այլևս նրան բան

չունեի ասելու, ուստի և չշարունակեցի: Ամեն ինչ ինձ համար պարզ էր. այստեղ վրիժառության ոգին էր գործում, մարդկային ու մարդասիրական ոչինչ չկար… դրանք խիստ ոտնահարված էին:

Չիս քշեցի ու հասա ընկերներիս: Ես կարծես հարբած լինեի: Այդ կնոջ պատկերը՝ իր հսկա հասակով, աչքիցս չէր հեռանում, նրա ցասումով լցված հոգու ձայնը դեռ ականջումս էր: Սակայն ինչու՞ այսպես պետք է լինի, ինչու՞ երկու դարավոր հարևաններ չպետք է իրար հասկանան և ինչու՞ նրանք հաշտ ու համերաշխ չպիտի կարողանան իրենց կյանքը շարունակել. ովքե՞ր են այն չարագործները, որոնք թունավորել են այդ երկու հարևաններին իրար դեմ: Չէ՞ որ այս բոլորն, ինչ որ կատարվում է, խնդրի ճիշտ լուծումը չէ:

Ահա այս մտքերի մեջ խորասուզված էի, երբ Ստեփանյանն ինձ հարց տվեց, թե ի՞նչ էի խոսում այն կնոջ հետ: Ես նրան պատմեցի այդ երկու կուժի պատմությունը և, միևնույն ժամանակ, հայտնեցի իմ կարծիքն այս բոլոր անց ու դարձի մասին:

– Այո, միանգամայն ճիշտ ես մտածում,– պատասխանեց նա,– բայց քանի Ադրբեջանի կառավարության ղեկավարներն արյունարբու խոսրովբեկ սուլթանովներն ու մյուս սրիկաները կլինեն, այս երկու ժողովուրդները հանգստանալ չեն կարող: Չպետք է զարմանալ և միևնույն ժամանակ հուսահատվել, քանի որ դարերից ի վեր սա է մեր ժողովրդի դառն ճակատագիրը: Կարծես թե սահմանված է, որ միշտ մեր ժողովուրդը դառնությունների ու տանջանքների մեջ պետք է լինի. չէ՞ որ մենք ևս ապրել ենք ուզում:

Մի՞թե մենք կարող ենք համաձայնվել, որ ստրկության շղթաներն անցկացնեն մեր ոտներին ու ձեռքերին: Այսօրվա մեր դառնություններով լի պայքարը մեր կուլտուրայի, մեր ազատության պաշտպանության համար մղվող պայքար է, որի համար և մեր ժողովուրդը ոչինչ չի խնայում՝ հավատացած լինելով, որ նրա համար էլ կծագի արշալույսի վառ ու պայծառ ճառագայթները:

ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թթ. 256 - 258: Ինքնագիր: Մեքենագիր: